

Ց. Ս. Տեր-Ստեփանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՍՏԱՑՎԱԾ ԿԱՐՏՈՖԻԼԻ ՆՈՐ ՇԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՁԵՎԵՐԸ

(Զեկուցումը կարդացված է Գիտությունների Ազգային ֆիլիալի
13-րդ սեսիայում 1943 թ. մայիսի 29-ին)

Հայրենական մեծ պատերազմի օրերին գյուղատնտեսությունն առջև
ծառացած խնդիրների մեջ՝ կարտոֆիլացանութային հարցերը ժողովրդատնտե-
սական և պաշտպանական շատ մեծ նշանակություն ունեն։

Հայկական ՍՍՌ-ի ռայոնների մեծ մասում ներկայումս կարտոֆիլը
հիմնական շաքարահերկ կուլտուրաներից մեկն է։ Հանրածանոթ է կարտո-
ֆիլի տնտեսական նշանակությունը որպես սննդամթերք։ Կարտոֆիլը
մշակվում է թե՛ ջրով և թե՛ անջրդի վայրերում։

Կարտոֆիլի ցանքի տարածությունը վերջին տարիների ընթացքում
նշանակալի չափով մեծացել է։ 1942 թվին այդ կուլտուրայով զբաղեցրած
տարածությունը մոտավորապես երկու անգամ ավելի էր, քան տաս տարի
առաջ։ Արմատապես բարեփոխվել է նաև սորտային կազմը։ Համեմատաբար
ցածրաբերք սորտերի խայտաբղետ ցանքերի փոխարեն մենք այժմ ունենք
կարտոֆիլի բարձրաբերք ստանդարտ սորտեր ցանքերի տարածության
մեծ մասի վրա։ Այսպիսով՝ համախառն արտադրանքը շատացել է ոչ մի-
այն տարածության լայնացման, այլև սորտային կազմի լավացման շնորհիվ։

Ի՞նչ պատկեր ունենի կարտոֆիլի ցանքերը մեր ռեսպուբլիկայում
1932—1938 թվերին։ Մեր հետազոտությունը ցույց է տվել, որ նրանք
հիմնականում կազմված են Միության տարբեր շրջաններից բերված սորտե-
րի խառնուրդից։ Մի շարք տարիների ընթացքում մեզ հաջողվեց «Ժողովրդ-
դական» սորտի առանձին մաքուր օջախները բազմացնել և տարածել այն-
պես, որ 1938 թվին կարտոֆիլի ցանքերի 70 տոկոսն այդ սորտն էր զբա-
ղեցնում, իսկ մնացած տարածության վրա կարելի էր հանդիպել, որպես
խառնուրդ, ամենատարբեր սորտերի՝ սկսած այնպիսի բարձրորակ սորտե-
րից, ինչպես «Վաղահաս Վարդագույնը», «Վոլտմանը», «Մազնում Բոնումը»,
«Սվիտեզը», և վերջացրած ցածրաբերք սորտերով, որոնցից են «Դեղնա-
վարդագույնը», «Սոչոքատերևը», «Բելլոպլոտը» և այլն, ընդամենը մոտա-
վորապես 24 սորտ։ Այդ դրությունը խիստ անզոհացուցիչ էր, մանավանդ
որ ռեսպուբլիկայի չորս ռայոններում կատարած սորտատնուկումը որոշակի
ցույց տվեց, որ Հայկական ՍՍՌ-ի ռայոններից մեծ մասի համար գերա-
դաս նշանակություն ունի «Լորի» սորտը, որը ստացել է սովետական հայտնի
սելեկցիոներ, Գյուղատնտեսական գիտությունների դոկտոր Ա. Գ. Լորից։

Միայն 1938 թվից հետո պարտիական և կառավարական օրգանների աջակցությամբ մեզ հաջողվեց լուծել այդ բարձրորակ սորտը Հայկական ՍՍՌ-ի կարտոֆիլային տնտեսություն մեջ որպես ստանդարտ սորտ մասնաշաբար մտցնելու խնդիրը: Ներկայումս մեր ռեսպուբլիկայի կարտոֆիլի ցանքերի 90 տոկոսը զբաղեցրած է այդ սորտով:

Սակայն մենք չենք կարծում, թե կարտոֆիլի սորտային կազմի խնդիրը վերջնականապես լուծված է: «Լորխ» սորտը ստացված է մեր հիմնական լեռնային կարտոֆիլացան ուսյունների պայմաններից խիստ տարբեր էկոլոգիական պայմաններում: Մեզ թվում է, որ տվյալ բնապատմական պայմաններին հարմար նոր ձևերը պետք է ստեղծվեն անմիջականորեն այդ նույն կոնկրետ պայմաններում: Մեր բազմամյա դիտողությունները մեծ թվով սորտերի վրա ցույց են տվել, որ կլիմայական և հողային պայմանները խիստ կերպով ազդում են կարտոֆիլի բույսի աճման և զարգացման բնույթի վրա:

Կարտոֆիլի մի քանի հայտնի սորտեր, ինչպիսին են «Վաղահաս Վարդազույնը», «Լորխը», «Ժողովրդականը», «Վոլոմանը», Հայկական ՍՍ Ռեսպուբլիկայի պայմաններում մի շարք մորֆոլոգիական և բիոլոգիական հատկանիշներ են ցուցաբերել, որոնք համարյա չեն նկատվել Միության հյուսիսային ուսյուններում: Կլոնային ընտրություն կատարելով մենք հաստատեցինք, որ «Լորխ» սորտի պալարները սպիտակի փոխարեն կարող են կարմիր լինել, «Վոլոման» սորտի ծաղիկներն իրենց գույնը փոխել են սպիտակի, իսկ պալարները բաց-վարդագույնի հատկապես Կիրովականի ուսյունում, մինչդեռ հայտնի է, որ այդ սորտի ծաղիկները ամենուրեք կարմրամանուշակագույն են և պալարները կարմիր: Այդ դիտողությունները ցույց տվին մեզ, որ անհրաժեշտ է մանրամասնորեն ուսումնասիրել կարտոֆիլի մի քանի սորտերի և հիբրիդների կլոնային ճեղքումը զանազան էկոլոգիական պայմաններում: Այդ ուսումնասիրությունային շնորհիվ մենք ստացանք տնտեսորեն հեռանկարային նոր «Ջերո» ձևը:

Մյուս կողմից, խիստ կարևոր է ստանալ այնպիսի սորտեր, որոնք տնտեսական բարձր ցուցանիշներ ունենալով հանդերձ լինեին նաև կայուն զանազան սնկային և բակտերիալ հիվանդությունների հանդեպ: Այդ խնդիրը լուծելու հիմնական ուղին է այնպիսի սորտերի խաչասերումը, որոնցից մեկն ունի տնտեսական լավ հատկանիշներ, իսկ մյուսը թեև տնտեսական բարձրարժեք հատկանիշներ չունի, բայց շատ կայուն է հիվանդությունների հանդեպ: Աշխատելով նաև այդ ուղղությամբ՝ մեզ հաջողվեց ստանալ մի այլ տնտեսական-հեռանկարային ձև՝ «17»:

Պետք է նշել, որ մինչև վերջին տասնամյակը կարտոֆիլի նոր սորտեր ստանալու ամբողջ սեկեկցիոն աշխատանքը հիմնվում էր կարտոֆիլի միայն մի տեսակ Sol. tuberosum սահմաններում կատարվող միջսորտային խաչասերումների վրա: Մեծ մասամբ հենց այսպես էլ ստացվել են մեզ հայտնի սորտերը, որոնց թիվը հինգ հազարի է հասնում: Սակայն ժամանակի ընթացքում պարզվեց, որ այդօրինակ խաչասերումները զանազան հիվանդությունների հանդեպ իմուն, ավելի շատ օւլա պարունակող, էլ ավելի բերքատու և վաղահաս սորտեր ստանալու հարցում հաջող արդյունքներ չեն տալիս: Սեկեկցիոններները սկսեցին հետաքրքրվել կարտոֆիլի նոր տեսակներով, որի համար բազմաթիվ էքսպեդիցիաներ ուղարկվեցին Հարավա-

յին Ամերիկա: Առանձնապես արդյունավետ էր Համամիութենական Բուսաբանական ինստիտուտի կազմակերպած սովետական էքսպեդիցիան: Սովետական Միության սելեկցիոն կայանները ստացան կարտոֆիլի նոր և չափազանց արժեքավոր տեսակներ—պրիմիտիվ-կուլտուրական ցրտադիմացկուն տեսակներից Sol. luzepczukii, Sol. ajanhuri, Sol. curtilobum, Sol. acaulis և այլն, վայրի իմուն և ֆիտոֆտորայի հանդեպ կայուն տեսակներից՝ Sol. demissum և այլն, վիրուսների հանդեպ իմուն անդիական տեսակներից և ձևերից՝ Sol. andigenum, Sol. Rybinii և այլն:

Սելեկցիոներներն այս տեսակները սկսեցին օգտագործել խաչասերումների համար որպես ծնողական ձևեր: Նրանց բնորոշ կազմերից մեկը այն է, որ մեր Միության հյուսիսային լայնություններում աճեցնելիս դրանց մեծ մասը շատ մանր պալարներ է տալիս: Այս առանձնահատկությունը պահպանվում է նաև այն հիբրիդների մեջ, որոնք ստացվել են դրանց խաչասերումից Sol. tuberosum-ի զանազան սորտերի հետ: Մեղ թվում էր, որ այդ տեսակների և նրանց հիբրիդների՝ պալարների մանր լինելը պայմանավորվում է ոչ այնքան նրանց ժառանգական հատկություններով, որքան մեր Միության հյուսիսային լայնությունների էկոլոգիական պայմաններով՝ խիստ տարբեր հայրենիքի պայմաններից, որտեղ նրանք հաճախ խոշոր և լիարժեք պալարներ են տալիս: Հետաքրքիր էր այդ տեսակների և Sol. tuberosum-ի միջև Միության մի քանի սելեկցիոն կայանների ստացած հիբրիդներն աճեցնելը Սևանի ավազանի, մասնավորապես Նոր-Բայազետի ռայոնի լեռնային պայմաններում:

Այդ նպատակով կարտոֆիլային տնտեսության Համամիութենական ինստիտուտից ստացվեցին 19 հիբրիդներ: Նույն տարիներում, այն է՝ 1937-ից մինչև 1939 թվերի ընթացքում այդ հիբրիդները ցանվել են Նոր-Բայազետի ռայոնում, և համեմատական տվյալներ ստանալու համար նաև ցածրադիր զոնայում՝ Երևանի շրջակայքում: Մենք այդ հիբրիդները խաչասերել ենք տեղական հայտնի սորտերի հետ, բայց ամենազվազանը այն է՝ մենք ուսումնասիրել ենք այն փոփոխությունների ընույթը, որ ցուցաբերել էին այդ հիբրիդներն աճման նոր պայմաններում:

Վաղուց հաստատված է, որ կարտոֆիլը միջավայրի ազդեցության տակ փոխվում է (3): Մեր կողմից ուսումնասիրված հիբրիդները և նրանցից խաչասերումների միջոցով ստացված նոր ձևերը թե՛ լեռնային պայմաններում և թե՛ հարթավայրում շատ մանր պալարներ են տվել: Սակայն Բելոռուսական փորձնական կայանի հիբրիդից (Sol. andigenum $\times$ Sol. tuberosum) ստացված բազմաթիվ բույսերի մեջ 1938 թվին մեկ բույսն առանձնապես աչքի ընկավ իր ուժեղ աճումով, խիստ կտրատված տերևներով, բայց որ ամենից կարևորն է, խոշոր, սպիտակ և երկարավուն-օվալ պալարներով: Այդ բույսն առանձնացրինք և հետագա տարիներին բազմացրինք արագացրած եղանակներով: 1940—42 թվերին այդ ձևը «Լորի» սորտի հետ համեմատական փորձարկման ենթարկվեց, պարզվեց, որ «Զերո» անունը ստացած այդ ձևն ավելի արժեքավոր տնտեսական հատկանիշներ ունի, քան «Լորի»:

Տանք այդ ձևի համառոտ ընութագիրը:

Ձևը սեղանա-ուռնիվերսալ ուղղության է: Միջահաս, 135 օրվա վեգետացիոն շրջանով: Թուփը հզոր է, ուղիղ կանգնած, լավ տերևակալած: Ցողունները հաստ են, չգունավորված, տերևները խիստ կտրատված են,

խոշոր մասերով: Ծաղիկները վառ կարմրա-մանուշակագույն, թվով շատ, հետազայում առատորեն տալիս են խոշոր հատապտուղներ: Պալարները սպիտակ, միսը սպիտակ: Ծիլերը հաստ, կարմրա-մանուշակագույն: Բուեր կիսամիտի: Հայկական ՍՍՌ-ի Հողփողկոմատի պտղաբանֆարաբուծական վարչության սորտաստուգման ցանցի տվյալներով 50—60 ցենտներով ավելի բերք է տվել, քան «Լորխը»: Միջին բերքատվություն է հեկտարից 329 ցենտներ: Մեր հնգամյա տվյալներով այս ձևի մեջ օսլան կազմում է 19,8 տոկոս («Լորխը» 18,1 տոկոս): Զմեռում է շատ լավ: Համը շատ լավ է: Կայուն է ֆիտոֆտորայի և վիրուսային հիվանդությունների հանդեպ: Պալարների մեծ ապրանքայնություն է տալիս: Առաջարկվում է ռեսպուբլիկայի լեռնային ռայոնների համար որպես միջին ուշահաս ունիվերսալ սորտ՝ «Լորխ» սորտի փոխարեն:

Վերևում սաացինք, որ «Զերո» ձևը ստացվել է կոնսյուն ընտրությունով. այդ նույնը չենք կարող ասել «17»-ի մասին: Այս վերջինն առաջացել է կարտոֆիլային ինստիտուտից ստացված հիբրիդների առաջին սերունդի և տեղական սորտերի միջև կատարված սնմիջական խաչասերումներից: Մենք կատարել ենք մեծ թվով այդպիսի խաչասերումներ և ստացել ենք բազմաթիվ հիբրիդներ, սակայն դրանցից պահել ենք միայն տասը, որոնք հեռանկարային հատկանիշներ ունեն: «17»-ը այդ տաս հիբրիդներից մեկն է, որը 1938 թվին հիբրիդային սածիլներից ընտրությունով ստացանք և հետագայում ամրացրինք վեգետատիվ բազմացման միջոցով:

Մեր կողմից 1940—1942 թվերին այդ ձևը համեմատական ստուգման ենթարկվեց «Էպիկուր», «Վաղահաս-վարդագույն» և «Լորխ» սորտերի հետ: Ստուգումը ցույց տվեց, որ «17» ձևը տնտեսական բարձրաժեք հատկանիշներ ունի և այժմ առաջարկվում է ռեսպուբլիկայի Հողփողկոմատի Պտղաբանֆարաբուծական Վարչությանը՝ սորտաստուգման համար:

Այս ձևի համառոտ բնութագիրը հետևյալն է՝

Ձևը սեղանի է: Միջին վաղահաս՝ 95-օրյա վեգետացիոն շրջանով: Թուփը միջին բարձրության է, լավ տերևակալած: Ծաղիկները սպիտակ, ծաղկումը միջին: Տալիս է լրիվ հասունացած սերմերով խոշոր հատապտուղներ: Պալարները սպիտակ, իդեալական-գնդաձև (միանգամայն հարմար՝ մեքենայով տնկելու համար), աչքերը հազիվ նկատելի: «Վաղահաս Վարդագույն» և «Էպիկուրի» համեմատությամբ բերքը 30 տոկոսով ավելի է: Միջին բերքատվություն է մեկ հեկտարից 200 ցենտներ: Օսլայի պարունակություն է 17,8 տոկոս: Լավ աճում է թեթև և միջին ծանրության հողերում: Ֆիտոֆտորայի և վիրուսային հիվանդություններին քիչ է ենթակա: Պահպանությունը ձմեռային լավ է: «Վաղահաս Վարդագույն», «Էպիկուր» և «Լորխ» սորտերի հետ համեմատած համն ավելի լավ է: Առաջարկվում է «Վաղահաս Վարդագույն» և «Էպիկուր» սեղանի վաղահաս սորտերին փոխարինելու համար:

Ի՞նչ վիճակումն է այդ ձևերի հետագա բազմացման և գյուղատնտեսական արտադրության մեջ մտցնելու հարցը:

Ներկայումս այդ երկու ձևերի ամբողջ սերմացուն կենտրոնացված է Նոր-Բայազետի ռայոնի Փաշաքյանդ գյուղի կոլխոզում, որն ըստ էության մեր սերմնաբուծական աշխատանքների բազան է եղել: 1942 թվին այդ կոլ-

խողում «Զերո» ձևը ցանված է եղել 24 հեկտարի վրա, իսկ «17» ձևը ցանված է եղել 0,2 հեկտարի վրա:

Այս ձևերը շնորհիվ իրենց բերքատվության բարձր ցուցանիշների, ինչպես նաև լավ ձմեռելուն և այլ լավ հատկանիշների, Փաշաթյանդի կոլխոզ-վարչության ու աշխատավորների ցանկությանը կոլխոզը 1943 թ. անցավ ավելի մեծ մասսիվներով «Զերո» ձևի ցանք կատարելուն, իսկ Նոր-Բայազետի ուսյոնի Գործադիր Կոմիտեն այդ փորձի հիման վրա որոշում հանեց «Զերո» ձևը տարածել ուսյոնի հինգ այլ կոլխոզներում ևս: Այսպիսով կարտոֆիլի այդ ձևը ոչ միայն Նոր-Բայազետի, այլև ռեսպուբլիկայի մյուս ուսյոններում լայն տարածելու բոլոր հիմքերը կան: Պետք է նշել, որ մինչև այժմ ձեռք առած միջոցառումները միանգամայն անբավարար են նշված ձևերի լայն տարածման համար:

Մենք կարծում ենք, որ առաջարկված բերքատու ձևերի բազմացումը կնպաստի բարձրորակ կարտոֆիլի ընդհանուր համախառն արտադրանքի շատանալուն:

Սակայն չի կարելի ասել, թե կարտոֆիլի միայն սորտային կազմի փոխարինումը կարող է արմատական փոփոխություններ առաջացնել: Կարտոֆիլի լավագույն սորտերի և նոր ձևերի բոլոր պոտենցիալ հնարավորությունները լրիվ կերպով արտահայտվում են միայն այն ժամանակ, երբ նրանց մշակությունը տարվում է ազդրտեխնիկայի բոլոր կանոնների հիման վրա և հաշվի են առնվում կարտոֆիլի պահանջը խոնավության, սննդի, ջերմության նկատմամբ՝ բույսի աճման զանազան շրջաններում: Կարտոֆիլի նոր ձևեր ստեղծելով և բազմացնելով միաժամանակ պետք է կուլտուրական հող ստեղծել, որպեսզի լրիվ կերպով օգտագործվեն նրա մեջ եղած սննդանյութերը և խոնավությունը: Բացի դրանից, մենք պետք է եղանակի աննպաստ պայմանների դեմ պայքարի զանազան միջոցներ մշակենք և կիրառենք: Այդ բոլոր պայմանները կատարելով միայն կարող ենք ապահովել կայուն բարձր բերք:

ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի
Երկրագործության Ինստիտուտ

Т. С. Тер-Саакян

Новые перспективные формы картофеля, выведенные в условиях Армянской ССР

(Доклад, прочитанный на 13-ой сессии АрмФАН 29 мая 1943 г.)

В решении задач, стоящих перед сельским хозяйством в период Отечественной войны, вопросы развития картофелеводства имеют крупнейшее народнохозяйственное и оборонное значение.

В Армянской ССР картофель является в настоящее время одной из основных пропашных культур в полеводстве большинства районов. Экономическое значение картофеля, как пищевого продукта,

общеизвестно. Тем более, что он культивируется как на богаре, так и на поливных участках.

Площадь под картофелем за последние десять лет увеличилась примерно вдвое. За эти же годы коренным образом улучшился сортовой состав посевов картофеля: вместо большого количества относительно малоценных сортов картофеля вся основная площадь засеивается стандартным, высококачественным сортом „Лорх“. Вследствие этого мы имели увеличение валовой продукции не только благодаря увеличению посевной площади, но и в силу улучшения сортового состава.

Какую картину в этом отношении представляли посевы картофеля в нашей республике в период с 1932 по 1938 годы. Обследование, произведенное нами, показало, что в основном они представляли собою смесь различных сортов, завезенных главным образом из разных районов Союза.

В течение ряда лет нам удалось размножить и распространить отдельные очаги чистосортного материала „Народный“ таким образом, что в 1938 году 70% всех посевов картофеля занимал этот сорт. На остальной площади можно было встретить как примесь самые разнообразные сорта, начиная с таких сортов, как „Ранняя Роза“, „Вольтман“, „Магнум Бонум“, „Свитезь“ и кончая такими малоценными сортами, как „Желторозовый“, „Крупнолистный“, „Беллоплет“ и другие, общим числом примерно около 24 сорта. Такое положение вещей являлось крайне неудовлетворительным, тем более, что приведенное нами сортоиспытание в 4-х районах республики явно указывало на преимущественное значение для большинства районов Армянской ССР сорта „Лорх“, выведенного коллективом сотрудников ИКХ.

Только после 1938 года нам удалось с помощью партийных и правительственных органов осуществить задачу массового внедрения этого высокоценного сорта в картофельное хозяйство Армянской ССР в качестве стандартного сорта.

В настоящее время 95% всей площади под картофелем в нашей республике занято посевами этого сорта.

Однако, считать задачу улучшения сортового состава картофеля законченной мы не можем. Сорт „Лорх“ выведен в экологических условиях, резко отличных от условий наших основных картофельных горных районов. Создание новых форм картофеля, являющихся наилучшими для данных естественно-исторических условий, должно идти непосредственно в этих же конкретных условиях. Что климатические и почвенные особенности резко влияют на характер роста и развития картофельного растения, показывали наши многочисленные наблюдения над рядом сортов.

Некоторые известные сорта картофеля, как, например, „Р. Роза“, „Лорх“, „Народный“, „Вольтман“, в условиях Армянской ССР выявляли ряд морфологических и биологических признаков, почти

не встречающихся в северных районах Союза. Нами было установлено, что клубни „Лорх“ могут взамен белой окраски иметь красную окраску, сорт „Вольтман“, имеющий повсеместно красные клубни и краснофиолетовые цветы, в некоторых районах Армении, в частности в Кироваканском районе, менял окраску цветов на белую, а окраску клубней на светло-розовую (1). Подобного рода наблюдения привели нас к мысли о необходимости тщательного изучения клонового расщепления некоторых сортов и гибридов картофеля в различных экологических условиях. Результатом этого изучения явилось выделение нами новой хозяйственно-перспективной формы „0“. С другой стороны чрезвычайно важной представлялась задача выведения новых сортов, обладающих наряду с высокими хозяйственными показателями также устойчивостью к различным грибным и бактериальным заболеваниям. Основным путем к решению такой задачи является скрещивание сортов, имеющих хорошие хозяйственные признаки, с высокоиммунными формами, среди которых большинство лишено хороших хозяйственных показателей. Мы применили этот метод, в результате чего нам удалось выделить другую хозяйственно-перспективную форму „17“.

История возникновения этих двух форм

Известно, что в Европе привился и культивировался исключительно один вид картофеля—*Sol. tuberosum* и вся селекция по созданию новых сортов базировалась главным образом на межсортových скрещиваниях в пределах этого одного вида. Таким образом собственно и было создано большинство известных сортов картофеля. Однако, с течением времени выяснилось, что подобного рода скрещивания не дают успешных результатов в смысле выработки форм иммунных к различного рода заболеваниям, не способствует дальнейшему увеличению крахмалистости, крупности зерен и клубней, урожайности и скороспелости растений.

Селекционеры стали привлекать новые виды, за которыми были отправлены многочисленные экспедиции в Южную Америку. Особенно плодотворные результаты были получены советской экспедицией ВИР-а (2). Селекционные станции Союза получили чрезвычайно ценные новые виды картофеля, как, например, из примитивно культурных морозостойких видов: *Sol. Iuzepczukii*, *Sol. ajanhuiri*, *Sol. curtilobum*, *Sol. acaule* и т. д., из дикарей, характеризующихся иммунитетом или высокой устойчивостью к фитофторе: *Sol. demissum* и другие; устойчивые к вирусным болезням андийские виды и формы картофеля: *Sol. andigenum*, *Sol. Rybinii* и т. д.

Эти виды были использованы селекционерами при скрещиваниях, как исходные родительские формы. При выращивании этих форм в северных широтах нашего Союза большинство из них давало чрезвычайно мелкие клубни. Эта особенность оставалась харак-

терной в большинстве случаев и для гибридов, полученных от скрещивания различных сортов *Sol. tuberosum* с этими видами.

Нам кажется, что образование мелких клубней у этих видов и их гибридов обуславливается не столько наследственными свойствами, сколько влиянием экологических условий северных широт нашего Союза, резко отличных от горных условий родины этих видов, где они часто дают крупные клубни. Представляло интерес испытать гибриды этих видов с *Sol. tuberosum*, уже полученные ранее некоторыми селекционными станциями нашего Союза у нас в горных условиях Севанского бассейна, в частности в Нор-Баязетском районе.

С этой целью были получены 19 гибридов из Института Картофельного Хозяйства и один гибрид из Белорусской Зональной Станции.

В течение 1937—1939 годов производились посадки этих гибридов в Нор-Баязетском районе, а для получения сравнительных данных и в низменной полосе в окрестностях г. Еревана. Эти гибриды мы скрещивали с местными известными сортами, но особое внимание мы уделяли изучению характера тех изменений, которым подвергались эти гибриды в новых условиях выращивания.

Изменчивость картофеля под влиянием среды является давно установленным фактом. Еще Дарвин (3) приводит несколько примеров изменчивости клубней картофеля. На странице 258 он пишет: „У обыкновенного картофеля (*Sol. tuberosum*) иногда изменяется только одна почка или глазок и образует новую разновидность. Иногда же,—это более замечательное явление,—все глазки одного клубня изменяются одинаковым образом и одновременно так, что весь клубень принимает новый характер. Например, было замечено, что один глазок в клубне старого пурпурового картофеля *Forty fold* сделался белым, глазок был вырезан и посажен отдельно, получился сорт, впоследствии весьма распространенный. Картофель „*Kemp's*“ собственно белый, но один куст в Ланкашире дал два красных клубня и два белых. Красный сорт был разведен, как обыкновенно, глазками и остался верным своему новому цвету. А так как последний оказался плодовой разновидностью, то он вскоре сделался весьма известным под названием „*Taylors Forty-fold*“.

Подобную картину изменчивости мы наблюдали в наших посевах, причем параллельно с изучением морфологических признаков мы особенное внимание обращали на хозяйственно-важные признаки. Почти все гибриды и в наших условиях давали крайне мелкие клубни, особенно в условиях низменной полосы. Однако в 1938 году среди многочисленных растений, полученных от размножения гибрида Белорусской зон. станции (*Sol. andigenum* × *Sol. tuberosum*) одно растение резко выделялось мощным развитием куста, сильно рассеченными листьями, белыми удлинненно-овальными клубнями. Этот куст был выделен и последующие годы подвергнут размножению ускоренными способами. В 1940—43 г.г. эта выделенная форма была подвергнута

сравнительному испытанию со стандартным сортом „Лорх“, причем результаты испытания вызвали более ценные хозяйственные показатели этой формы, названной мною „0“.

Остановимся вкратце на характеристике этой формы.

Форма „0“ столово-универсального направления. Средне-спелая с вегетационным периодом 135 дней. Куст мощный, прямо-стоячий, хорошо облиственный. Стебли толстые, неокрашенные. Листья сильно рассеченные, с крупными долями. Цветы ярко краснофиолетовые, цветение обильное с последующим образованием обильного количества крупных ягод. Клубни белые, по форме—удлиненно-овальные, глазки неглубокие, кожица плотная и гладкая, мякоть белая, при разрезе не чернеет. Ростки толстые, красно-фиолетовые. Гнездо полускученное. По данным испытания Плодоовощного Управления НКЗема Армянской ССР за три года урожай этой формы был выше „Лорх“-а на 35%. Средняя урожайность—329 центнера картофеля. Содержание крахмала по нашим данным—в среднем за пять лет 19,8% (у сорта „Лорх“—18,1%). Лежкость клубней отличная—они хранятся более продолжительное время. Вкусовые качества высокие. Стоек против фитофторы и вирусных заболеваний. Дает высокую товарность клубней. Предлагается как средне-позднеспелый универсальный сорт взамен сорта „Лорх“ для нагорных районов республики.

Форма № „17“.

Если форма „0“ была выведена в результате клонового отбора, то форма „17“ в результате непосредственных скрещиваний гибридов первого поколения, полученных нами из И. К. Х. с местными сортами. Таких скрещиваний нами было произведено много, но перспективных гибридов, на которых сосредоточивалось наше внимание, было оставлено десять. Из этих десяти гибридов особенно выделился гибрид, полученный от скрещивания сорта „Народный“ с гибридом (*Sol. andigenum* × *Sol. tuberosum*), произведенного нами в 1937 г. в Нор-Баязетском районе. В 1938 году в первом поколении гибридных семян упомянутой комбинации путем отбора выделена новая форма „17“, закрепленная в последующие годы вегетативным путем.

В 1940—1942 годы эта форма испытывалась нами сравнительно с сортами „Эпикур“, „Р. Роза“ и „Лорх“. При испытании она выявила высокие хозяйственные показатели и в настоящее время предлагается для сортоиспытания Плодоовощному Управлению НКЗ Республики.

Краткая характеристика этого сеянца такова: форма „17“—столовая, средне-ранняя с вегетационным периодом 95 дней. Куст средней высоты, хорошо облиственный. Цветы белые, цветение среднее. Образует ягоды крупные с вполне вызревшими семенами. Клубни белые, идеально округлой формы (весьма удобные для машинной посадки), глазки еле заметные. Кожица снежно белая и гладкая, мякоть белая. Урожайность по сравнению с сортами „Ранняя Роза“ и „Эпикур“ выше на 30%. Средняя урожайность на гектар 200 центнеров. Содержит крахмала 17,8%. Хорошо удается на легких почвах.

Мало повреждается фитофторой и вирусными заболеваниями. Лежкость хорошая—хранится более продолжительное время. Вкусовые качества высокие по сравнению с сортами „Р. Роза“, „Эпикур“ и „Лорх“. Предлагается для замены ранних столовых сортов „Эпикур“, „Ранняя Роза“.

В настоящее время весь семенной материал по обеим формам (около 500 тонн) сосредоточен в колхозе сел. Пашакянд Нор-Баязетского района, являющегося по существу базой для наших семеноводческих работ.

Полагаем, что размножение предлагаемых высокоурожайных форм приведет к увеличению общей валовой продукции высококачественного картофеля.

Однако, нельзя думать, что лишь одна замена сортового состава картофеля может привести к коренным изменениям: все потенциальные возможности лучших сортов и новых форм картофеля выявляются в полной мере лишь тогда, когда культура их ведется на базе соблюдения всех приемов агротехники, учитывающих потребность картофеля во влаге, питании и температура в различные периоды роста картофельного растения. Создавая новые формы картофеля и размножая их, мы одновременно должны создать также культурную почву, чтобы полностью использовать питательные вещества и воду, имеющиеся в почве. Кроме того, мы должны разработать и применять различные методы борьбы с неблагоприятными погодными условиями, так как только при соблюдении всех этих условий для роста посевов картофеля, можно добиться получения высоких стабильных урожаев.

ЛИТЕРАТУРА

1. Тер-Саакян Т. С.—Сорта картофеля в Армении (на армянском языке с русским резюме). Изд. Армянского Филиала Академии Наук СССР, 1939 г. гор. Ереван.
2. Букасов С. М.—Картофели Южной Америки и их селекционное использование. Изд. ВИР, 1933 г. Ленинград.
3. Дарвин Ч.—Прирученные животные и возделанные растения, том. 3 (часть первая). Изд. О. Н. Поповой, СПб. 1899 г.